ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **22/ապրիլի/2021 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....6..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Խաչատրյանը և Ս. Մարգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Դավթյանը, ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 22-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Ջերմուկ համայնքի զարգացման ծրագրեր ներկայացնելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան

1.2 Ջերմուկ համայնքի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակ ամբողջությամբ չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Ս. Պապոյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----6---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2021 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին տրամադրվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Ջերմուկ համայնքի՝ ստորև ներկայացվող տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը՝

ա) «Գերեզմանատան բարեկարգում, կանգառների հիմնանորոգում կամ փոխարինում նորով»,

բ) «Ջերմուկի համայնքապետարանի և ենթակա կառույցների համար գույքի ձեռք բերում»,

գ) «Կարմրաշեն գյուղական բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի կառուցում»,

դ) «Ջերմուկ քաղաքի ճոպանուղու շինությունների հիմնանորոգում, նորերի կառուցում»:

2. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման» կարգին համապատասխան կազմել և ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել սույն որոշման 1-ին կետի «ա»–ից «դ» ենթակետերում նշված ծրագրերի ֆինանսավորման հայտերի ամբողջական փաթեթները:

3. Սահմանել, որ ծրագրերի ներկայացման համար համայնքի 2021 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված դրանք իրականացնելու և համայնքի կողմից ներդրում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՄԲԱՏ ՊԱՊՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 58-րդ կետի հիման վրա՝

1. Թույլատրել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմին համայնքի կարիքների համար՝ քարտեզների և բուկլետների մշակման ու տպագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2021 թվականի ապրիլի 6-ին հայտարարված՝ «ՋՀ-ՔԲ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնման ընթացակարգը հայտարարելու չկայացած՝ գնման պահանջի դադարման հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ----6---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Զավենի բացակա	
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի բացակա	
Բագրատյան Արտակ Կառլենի	
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	
Գրիգորյան Արմեն Գրիշայի բացակա	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Սարգսյան Հասմիկ Ժորայի	

Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Ստեփանյան Գագիկ Ստեփանի բացակա	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____